ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա-ԻՆ (Անթիլիաս),

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Երուսաղեմ),

ԹՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Ստամբուլ),

ԲԱՐԵԽՆԱՄ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ
ԵՎ ԳԵՐԱՊԱՏԻՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ:

Սիրեցյալ Եղբայր Մեր.

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց, ձեզ և մեզ մեծ աւետիս»:

Սուրբ Հարության ավետիսը նոր լույս կիջեցնե մեր օրերու հուսացյալ աշխարհին վրա, մեր եկեղեցիին վրա, ամենուս հոգիներեն ներս:

Ազատ ու պայծառ թող շողա լույսը Հարության: Մարդիկ և ժողովուրդներ, իրենց մտածումներն ու ձեռաց գործերը թող այդ լույսով շաղախեն, բյուրեղացնեն՝ ի փառս Ամենակալին և ի փառս Մարդուն: Հարության լույսով թող առաջնորդվին նաև պետությունները՝ հասնելու համար իրական խաղաղության և արդարության ափին:

Այսօր սուրբ Հարության լույսեն լույս կբերենք Ձեզի հավիտենական սուրբ Էջմիածնեն՝ սրտագին մաղթանքով, որ Փրկիչը մեր Քրիստոս անսասան պահպանե հայոց Մայր եկեղեցին և համայն ժողովուրդը մեր, հոգեշեն և ազգանվեր գործոց առատ պտղավորումով:

Բարի մաղթանքներ նաև Ձերդ Սրբության, ձեր տիրախնամ Աթոռի ուխտապահ միաբանության և համայն մեր հավատավոր զավակներուն՝ ի պայծառություն և հանսասան միություն մեր առաքելական սուրբ եկեղեցվույն:

Արդ, սուրբ Հարության շնորհներով «ազատացեալք ի մեղացն, և ծառայեալք Աստուծոյ, ունիք զպտուղ ձեր ի սրբութիւն և վախճան նորա կեանք յաւիտենից: Զի թոշակն մեղաց մահ է. այլ շնորհք Աստուծոյ կեանք յաւիտենից ի Քրիստոս Յիսուս ի Տեր մեր» (Հռոմ. Զ 22—23):

Խնդությամբ և սիրո ողջունիվ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական վարչությանց և խորհուրդներին, Հայկական բարեգործական ընդհանուր միության Կենտրոնական վարչության նախագահ պրոֆ. Ալեքս Մանուկյանին (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության Կենտրոնական խնամակալության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգանին (Լիսաբոն), ս. Էջմիածնի հանձնախմբի նախագահ պրոֆ. Կ. Ալթունյանին (Բեյրութ), Վարդանանց ասպետներին (Ուոտերտաուն), Կալկաթայի հայկական ընկերության վարչությանը (Կալկաթա), գաղութային վարչություններին, հայրենասիրական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի և հոգևոր ճեմարանի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին:

Ծնթ.—Պատասխան հեռագրերը կտպագրվեն հաջորդ համարում: